

ՄԱՍԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են.
Իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇՈՒՇՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ Հօրհիսիմէ Մելքոնեան եւ Քրիստափօր Մկրտչեան Գա-
լտեանները՝ արտագին չնորհակալութիւն են յայտնում իրանց ազգականներին, բարե-
կամեաներին, ծանօթներին եւ յարգողներին, որոնք իրանց ներկայութեամբ յարգեցին ա-
ռաջինի պատուական ամուսնու եւ երկրորդի թանգագին հօր՝ հանգուցեալ

Մ Կ Ր Տ Ի 2 Գ Ա Լ Ս Տ Ե Ա Ն Ի

յուզարկաւորութիւնը, նորոգեալ ցաւակցական հեռագիրներով բաժանեցին անբացատրելի
վիշտը եւ բազմաթիւ նամակներով կամեցան մխիթարել եւ թեթեւացնել իրանց կրօն
անփոխարինելի կորստի ծանրութիւնը:

ԲՈՎԱՆԱԿԱՆԻԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Պէպօ»-ի յօդուանը
վրաց բեմի վրա. Պոնտիֆեամբ եւ մասամբ
նորին. Դարձեալ հիպոտիզմը. Նամակ Ախալ-
քալաքից. Նամակ Ալեքսանդրօպօլից. Նամակ
Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Արտաքին լուրեր. —ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Պէպօ»-ի ՅՕԲԵՆԵԱՆԸ ՎՐԱՑ ԲԵՄԻ ՎՐԱ

Կիրակի, ապրիլի 29-ին, վրաց թատրոնա-
կան դահլիճում կայացաւ Գ. Սունդուկեանցի
«Պէպօ» կոմեդիայի երեսնամեայ յօդուանի տօ-
նակատարութիւնը, որ նախաձեռնել էր վրաց
դրամատիկական կոմիտեան:

Թատրոնական ֆոյլէն զարդարված էր Գ.
Սունդուկեանցի գրուածքների վերնագիրներով,
որոնք զետեղված էին դրօշակների մէջ:

Վրաց թատրոնական խումբը ներկայացրեց
«Պէպօ» պիեսը ամբողջապէս, իսկ յետոյ տեղի
ունեցաւ յօդուանի տօնակատարութիւնը:

Դերասան Արաշիճէ Արուսթէն Զիմիճիովի
դերը մէջ ցոյց տուցեց խաղալու մեծ տաղանդ.
Նա արտասանում է ամեն մի խօսքը եւ անում
է իր իւրաքանչիւր շարժումը մտածված կեր-
պով, եւ եթէ ունի պակասութիւն, այդ այն
է, որ նա Արուսթէն ազգային դուրս է բերում

չափազանց չնչին եւ մանր անձնաւորութիւն
կամ մի աննշան չարչի: Պէպօի դերը կատա-
րում էր Սիմօնիճէ, որ ունի այդ դերի հա-
մար արտաքին մեծ յարմարութիւններ, բայց

բաւականալից ուժեղ չէ դերը արտասանելու
մէջ: Էփեմիայի դերը անդուծեամբ կատարեց
տ. Սափարովա-Արաշիճէ: Բնորոշ էր Գեղեմա-
նով Կալուշու դերում եւ Կիպիանի Գիւրգի եւ
տ. Գաբունիս-Յազարիի Շուշանի դերում:

Ներկայացումը անցաւ առանաւարակ շատ աչ-
խոյժ կերպով եւ դերասանները արժանացան
բոլոր ծափահարութեան:

Ներկայացումից յետոյ նորից բարձրացաւ
վարագործը եւ սկսեց յօդուանական տօնա-
կատարութիւնը: Բոլոր դերասանները եւ յօ-
դուանին եկած պատգամաւորները կանգնած
էին բեմի վրա կիսաշրջան կազմելով: Յօդու-
անը գտնվում էր բեմին կից յատուկ օթեա-
կում:

Առաջ եկաւ դրամատիկական կոմիտեի կող-
մից Սուլիսանօվ, որը իր ծառի մէջ յայտնեց
թէ Սունդուկեանցի «Պէպօն» եւ միւս գրուածք-
ները միշտ սիրելի են եղել վրաց հասարակու-
թեան համար եւ թէ այդ պիեսների միջոցով
երկու հարեւան ազգերը ունեցել են առիթներ
միասին ուրախանալու եւ տեսնելու:

Երկրորդը խօսեց պ. Օպօ չիւնի, որ ա-
սաց հետեւեալը. «Ես եկել եմ իբրեւ ուսուսաց
արքունական թատրոնի ներկայացուցիչ վրաց
թատրոնը ողջունելու հայ թատերագրին: Այդ
միութեան մէջ ես տեսնում եմ համերաշխու-
թեան զաղափարի մի նշան: Յօդուանի տա-
ղանդը միշտ կատարել է միացնող դեր: Թա-
րօնը զարգացնում է ազգային հանճարի ար-
տայայտութիւնը, բայց մի եւ նոյն ժամանակ
նա կրում է համաշխարհային տարր, որովհե-
տեւ ստեղծագործութիւնները անցնում են մի
ազգի բեմից միւս ազգի բեմը եւ կապում ազ-

գերին նոյն զգացմունքներով եւ տպաւորու-
թիւններով:

Լիւդվիգօվ, որի դերասանական խումբը
ներկայացումներ է տալիս այժմ Թիֆլիսում,
ուզարկել էր իր չնորհաւորութիւնը, անկարող
լինելով անձամբ ներկայ լինել:

Դերասան Արաշիճէ խօսեց վրաց դերա-
սանների կողմից, ողջունելով յօդուանին:
Թիֆլիսի ժողովրդական թատրոնի երեք
բաժիններից եկել էին ներկայացուցիչներ:

Հայոց բաժնի կողմից օր. Շահանազարեան
բերել էր պսակ, իսկ Լ. Շիրինեանց խօսեց
մի ճառ, որի մէջ յայտնեց, որ ժողովրդական
թատրոնը ուզարկել է ողջունելու ժողովրդա-
կան հերոս Պէպօի ստեղծագործող յօդուա-
նին: Կարգադիցին ուղերձներ ուսաց եւ
վրաց բաժինների կողմից:

Դերասան Լիւդվիգօն իր ճառի մէջ ցոյց
տուցեց, որ վրաց թատրոնը ունեցել է երկու
շրջան, որոնցից առաջինը, որ սկսվեց յիս-
նական թաւաններին, շուտով կանգ առաւ
երկար ժամանակով, ամբողջ 25 տարի, եւ նո-
րից կենդանացաւ Պ. Սունդուկեանցի պիէս-
ների շնորհիւ: Այդ պիէսների սկիզբը դարձան
վրաց թատրոնական ստեղծագործութիւնների
համար, մշակեցին դերասաններ եւ ստեղծե-
ցին վրաց բեմի համար անմահ տիպեր:

Գեղեմանօվ կարգաց հեռագիրներ, որոնք
ստացվել էին Քոթայիսի դերասանական
խմբից եւ առանձին անհատներից, Բաղուի
համակրողներից եւ Երեւանի քաղաքապետից:

Մեծ խի կարգաց մի ոտանաւոր, որ տպա-
ւորութիւն գործեց:

Վերջում բեմ դուրս եկաւ յօդուանը, Գ.
Սունդուկեանց: Դահլիճը զղրջաց բոլոր ծա-
փահարութիւններից: Յօդուանը յայտնեց իր
չնորհակալութիւնը եւ նկատեց, որ նրա հա-
մար թանգ է եղել վրաց բեմը, որին նա վե-
րաբերվել է միշտ համակրութեամբ:

ՊՈՒՆԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՍԱՄԲ ՆՈՐԻՆ

(Նամակ Նոր-Նախիջեանից)

Ո՛հ, մի վախենա՛ք, ես պիտի խօսեմ այն
պոնտիֆեան մասին, որին բոլորս այնքան
սովոր ենք, ընտելացած ենք, որ մի հասարակ
բան ենք համարում:

Նոր-Նախիջեանում ձայնաւորների ընտրու-
թիւն է: Ավանդուցի դահլիճը լիքն է: Ներկայ
են երկու հարիւր նոր-նախիջեանցիներ, երկու
հարիւրն էլ թեկնածուներ, երկու հարիւրն էլ
իրանց արժանաւոր են համարում նախ ընտր-
վել ձայնաւոր եւ ապա, ի հարկէ, քաղաքա-
պետ:

Երբ մտնում էք դահլիճը, հեռուից, շատ հե-
ռուից ձեզ տեսնում են: Նկատում, ճանաչում,
վազում են ձեր առաջ, սեղմում ամուր ձեր ձեռ-
քերը, բարեւում, անհանգստանում ձեր առող-
ջութեան մասին: Սակայն ինչ է պատահել այ-
սօր: Ինչու այդ պարոնները դու երէկ ձեզ
չէին տեսնում, ճանաչում, բարեւում, իսկ
այժմ խոսեցին, հլու ծառաներ են դարձել:

Ի՜նչ է պատահել այսօր:
Այսօր ընտրութիւն է եւ պոնտիկ, այժ, պոն-
տիկ ու երկշտ աչքերի մէջ դուր կարգում էք
մի հարց:

—Այնպէս չէ, դու կը տաս ինձ քո քուէնդ:
Ես կը տայի ոչ թէ մի, այլ հարիւր քուէնդ:

Ես կը տայի ոչ թէ մի, այլ հարիւր քուէնդ:

Ես կը տայի ոչ թէ մի, այլ հարիւր քուէնդ:

Ես կը տայի ոչ թէ մի, այլ հարիւր քուէնդ:

Ես կը տայի ոչ թէ մի, այլ հարիւր քուէնդ:

հազար քուէնդ, որպէս զի չը տեսնէի այդ
պոնտիկ աչքերը:

Երէկ նա զոռոզ աղա էր. այսօր՝ դարձել է
հլու ծառայ:

Աղային մենք չենք սիրում, բայց հլու ծա-
ռան ինչ գարշելի բան է...

Եւ ես երբէք ոչ մի տեղ տեսած չէի այնչափ
ստոր ու կեղտոտ պոնտիկութիւն, որչափ տե-
սայ ապրիլի 20-ին եւ 21-ին Նոր-Նախիջեա-
նի ակաբանոցում, ձայնաւորների ընտրութեան
ժամանակ:

Սկզբից ես մտածում էի՝ ինչու չորս տարին
մի անգամ է լինում ընտրութիւն, լաւ չէր լի-
նի արդեօք, եթէ տարին չորս անգամ ընտ-
րէինք, գոնէ չորս անգամ ցոյց կը տայինք

իրար սէր, յարգանք: Բայց յետոյ, երբ
տեսայ թեկնածուներին, խեղճ, երկշտ, խո-
նար՝ թեկնածուներին, ես ափսոսացի, որ
տաճնչորս տարին մի անգամ չէ կայանում
ընտրութիւնը:

Սուտ սէր, սուտ յարգանք իրար ցոյց տա-
լու մէջ աշխարհի ասպարէզում մենք՝ նոր-
նախիջեանցիներս միշտ կարող ենք հպար-
տութեամբ պահանջել եւ ստանալ առաջին
մրցանակը:

Եւ միթէ միայն աղաներն են այդպէս:
Միթէ ինտելիգենտ դասակարգը եւս չէ հե-
տեւում աղաների օրինակին:

Մեր երեսները միշտ քաղցր ժպիտն անպա-
կաս է, ինչպէս վարդ գարնանը, եւ սակայն
սրտերիս խորքերում մենք պահում ենք նենգ
նախանձը, ինչպէս թունաւոր օձը պահվում է
կանաչ արօտի մէջ:

Մի ուրախանա՛ք, եթէ կը տեսնէք ժպիտը
մեր երեսներին, այդ Յուզայի ժպիտ է. օձը
քնած է, բայց նա կենդանի է, նա կը խաճէ
ձեզ վաղ թէ ուշ...

Մեր ակաբանոցում ապրիլի 20-ին եւ 21-ին
կարծես սիրահարներ էին ժողովել: Նա, ով
չը գիտէր մեզ եւ չէր ճանաչում մեզ, կարող
էր նախանձել մեր համերաշխութեան, միու-
թեան, սիրուն... բայց իմացողի համար երկու
հարիւր ամբողջ կային միայն քսան մարդիկ,
չափ շատ երեսուն, մնացածները պոնտիկներ
էին, կեղտոտ պոնտիկներ...

Ո՛վ էր մտածում քաղաքի մասին, հասարա-
կութեան չանքի մասին:

Տուփին մօտեցողը մտածում էր, թէ թէկնա-
ծուն ում կը տայ իր քուէն, ում կընտրէ քա-
ղաքապետ:

Անա մի խոշոր յիմարութիւն: Իրաւասուն
չէ ուղում ընտրել ձայնաւոր, նա ուղղակի ու-
ղում է ընտրել քաղաքապետ...

Անա ինչու քառասուն ձայնաւորների տեղ
մենք հազիւ հազ ընտրեցինք միայն երեսուն:
Չարմանալի տաղանդ ունենք մենք, մենք
պղծում ենք եւ արատաւորում ամեն ինչ, ո-
րին կաշնում ենք, մտնում, եւ ամենատուրը
պարտքը անգամ մենք դարձնում ենք... պոնտի-
կութիւն:

Գր. Չախուշեան

ԴԱՐՁՆԱԼ ՀԻՊՆՈՏԻԶՄԸ

(պ. Շէքերշեանի նամակի առիթով)

«Մշակի» № 84 մէջ պ. Շէքերշեան պատիւ
է անում ինձ՝ յայտնելով հրապարակով, որ
հայերիս մէջ առաջին անգամ հիպնոտիզմի
մասին գրողը ես եմ եղել: Զճարիտ է, ես
գրել եմ երկու հատորիկներ, որոնց մէջ ամե-
նաանշառ կերպով աշխատել եմ պատկերաց-
նել հիպնոտիզմի բարդ գիտութեան ժամանա-
կակից պատկերը:

Ես երկուստեքիւն եմ ունեցել ուսանելու
մեծ Եւրոպայի մօտ եւ լսելու նրա դարմանալի
դասախօսութիւնները այդ գիտութեան վերա-
բերելու: Հէնց այս է պատճառը, որ ես ինձ
բաւականալից ձեռնհաս համարեցի պատաս-
խանել պ. Շէքերշեանին եւ հիմա էլ սրբազան
պարտք եմ համարում հերքել նրա այն կար-
ծիքը, թէ «հիպնոտիզմն քուէնը բա-
ցարձակ ապէս ազատ է բոլոր վտան-
գաւոր ազգից ու թիւններից (երեսն

ուղում է ասել, որ հիպնոտիզմն, այսինքն
հիպնոտիզմն ընդ մէջ գրեցն անվնաս բան է
ենթակայի համար)» եւ թէ «հիպնոտիզմը
չի թուլացնի կամքը, ոչ էլ մտաւոր
կարողութիւնը, այլ, ընդհակառակը,
թոյլ կամք ու միտք ունեցողներին
կուժեղացնի»:

Այդպիսի մի կտրական կարծիք, այդչափ
հեղինակաւոր կերպով յայտնած, անտարակոյս
չատերին կարող է համոզել հիպնոտիզմն գոր-
ծողութիւնների անվնասակարութեան մէջ, —
մի բան, որը ցանկալի չէ: Դարձեալ ժողովրդի
չանքն աչքի առաջ ունենալով, մենք պարտք
ենք համարում զոչնչացնել նրան այս կարեւոր
կէտի վերաբերմամբ եւս:

Հիպնոտիզմ (հիպնոտիզմն քուէնը), մեծ գիտ-
նական Եւրոպայի դպրոցի ուսմունքով, համար-
վում է հիւանդական երեւոյթ: Բայց քանի որ
պ. Շէքերշեանը աւելի ծանօթ է ամերիկական
գիտնականների կարծիքին, մենք նրա ուշա-
դրութիւնը դարձնում ենք դօկտօր Morris-ի
կարծիքի վրա, որը նա յայտնել է մօտիկ ժա-
մանակներս:

Հիպնոտիզմը, նրա ստեղծող, կարող է
չափ մեծ առաւելութիւններ, նա պէտք է
աւելի մեծ զգուշութեամբ գործա-
դրվի, քան իսթօրօֆօրմը եւ եթերը,
որովհետեւ նրա անզգոյց գործա-
դրութիւնը կարող է խորապէս վնաս-
ւել կամքը: Այս էլ ասեմք, որ պ. Մօրիսը
երկար տարիներ ժողովրդից յետոյ եկել է այն
եզրակացութեան, թէ հիպնոտիզմը այն-
չափ էլ կարեւոր բուժական միջոց
չէ, որ արժենայ նրա համար հի-
ւանդներին եւ նրանցիւն ուղեղային
խանգարման վտանգին: Ինչպէս տեսնում
էք, Մօրիսը պ. Շէքերշեանի հակառակն է
պնդում:

Բժշկ. Վ. Արծրունի

ՆԱՄԱԿ ԱՆԱԿԱՆԱԿԻՑ

Ապրիլի 23-ին

Անբերրիութիւնից վնասված գիւղացիներին
օգնող տեղական կոմիտեայր երկու նիստ ունե-
ցաւ ապրիլի 18-ին եւ 21-ին:

Երկրորդ նիստը բանալով Թիֆլիսից նոր
վերադարձած գաւառապետը աւետեց, որ
պետական գանձարանի այն 12 միլիօն գումա-
րից, որ նշանակված է ամբողջ կայսրութեան
համար՝ անհրաժեշտ դէպքերում անբերրիու-
թիւնից վնասված գիւղացիներին փոխարինա-
բար հացահատիկ տալու, սերմացուի եւ ապ-
րուտի համար, — խաղաղաբէր գաւառի հա-
մար նշանակված է 40,000 ռուբլի, որ փոխա-
րինաբար պէտք է բաժանվի 24 գիւղերին՝
համաձայն անցեալ տարի Բարձրագոյն հառ-
տառված ընդհանուր հրահանգներին: Այդ հրա-
հանգները կարեւոր կէտերը, որոնք կարգադի-
ցին նիստի ժամանակ, հետեւեալներն են: Փո-
խառութիւնը կամուր է եւ կատարվում է
գիւղական համալսմունքով, որոնց մէջ մի առ-
մի պէտք է նշանակվեն այն ծխերը, որոնք
ուղում են մասնակցել փոխառութեանը: Որով-
հետեւ շատ ծխեր կարող են չը մասնակցել
փոխառութեանը, եւ փոխադարձ երաշխաւո-
րութիւն չը պիտի լինի, այդ պատճառով փո-
խառութիւնը համայնական չէ, այլ կրում է
անհատական բնաւորութիւն, թէեւ, ինչպէս
ասացինք, ցանկացող գիւղացիների կամուր
համալսմունքով պէտք է փոխառութիւն լինի:
Համալսմունքների հետ միասին պէտք է
ներկայացնեն փոխառութիւն խնդրող ծխերի
ընտանեկան ու տնտեսական զրուկները եւ
վարելահողի ու հարկաւոր սերմացուի քանա-
կութիւնը պարզող ցուցակ-զեկուցումներ,
որոնց մէջ տեղական վարչութիւնը կարող է
փոփոխութիւններ մտցնել իր ունեցած տեղե-
կութիւնների համաձայն: Փոխառութիւնը տըր-
վում է հացահատիկներով իւրաքանչիւր ամիս
ամեն մի հասակաւորին հաշվելով մի պոտը,
իսկ մինչեւ 5 տարեկան փոքրահասակներին —
կէս պոտը: Սերմացուն տրվում է հողի քանա-

կուրծան համաձայն: Ուստի եւ սերմնաւոր համար տրուում է այն հայտնաբերիչ, որ առհասարակ գերակշռող է անբերրութիւնից վերնաշրջանը չընթանալ փոխառութիւնը տրուում է երեք տարի ժամանակով եւ պէտք է ժողովի արժեքական, զեմելի եւ այլ տուրքերից առաջ: Եթէ գիւղացիները չը կարողանան երեք տարուց յետոյ պարտքը վճարել, կրկին երեք տարով կը յետաձգվի վճարումը: Ուրեմն ամենաշուրջ պարտքը պէտք է վճարել վեց տարուց յետոյ: Փոխառութիւնը տրուում է 3,60/0, այսինքն հարկեր ըստ հայտնաբերիչին 3 ր. 60 կ. տուրք պէտք է վճարել իւրաքանչիւր տարի: Ինչ ասել կուզէ, որ այս պայմաններով մեր գիւղացու փոխառութիւնը մեծ հարուած է մեր աշխարհակեր Եւրոպայի համար, որոնք աչքները տնկած գիւղացու դժբաղդութեանն են սպասում:

Բայց հրահանգներին՝ կարգապահներ եւ համալիրներն ու ցուցակներն ձեռի արդէն կազմված նախագծերը, որոնց եւ հաւանութիւն տուեց կոմիտեան: Գիւղացիների կազմելիք ցուցակները քննելու եւ վաւերացնելու ժամանակ կոմիտեան պէտք է առջնորդի իր կարգապահ ընդհանրացողով: Բայց որովհետեւ այդ ընդհանրացողովը չէ որոշված մինչեւ հինգ տարեկան փոքրահասակների թիւը, ուստի ընդհանրապէս բոլոր փոքրահասակների համար ամսական պէտք է կէս պոտ հայտնաբերի ինքնուր ամեն մէկին: Ուստի համար պէտք է յորեն տրվի, ինչպէս գաւառումս գերակշռող հայտնաբերիչ փոխառութեամբ կերակրելու ժամանակամիջոցը կոմիտեան որոշեց հինգ ամիս սկսած մայիսի 1-ից մինչեւ նոր հունիս, այն է մինչեւ հոկտեմբերի 1-ը: Որովհետեւ արդէն ուշ է, եւ տեղական ցրտատար հայտնաբերիչը անպէտք է ծանալված սերմացուի համար, իսկ մինչեւ ուրիշ տեղից սերմացու բերելը դարձնանալու ժամանակը կանցնի, կոմիտեան որոշեց դարձնանալու համար սերմացու չը բաժանել հիմա, այլ զբաղվել ուստի հայտնաբերիչ ձեռք բերելով ու բաժանելով եւ աշխատանքի համար վաղորդ սերմացու պատրաստելով: Գիւղացիներին պէտք է խորհուրդ տրվի ազատ մնալով դաշտերը հերկել, մշակել ապագայ աշխատանքի համար իսկ ազատ, չը ցանված դաշտեր շատ են մնացել: Հանդուրդները, եւ մանաւանդ վաշխանքները, որ առաջ հազարաւոր դեռատիկ արտեր էին ցանում, հիմա հազիւ 20 դեռատիկ ցանած լինեն իրանց դաշտերում:

Սալիւման

ՆԱՄԱԿ ԱԼԷՔԱՆԴՐՈՎՈՒԹ

Ապրիլի 20-ին

Ապրիլ ամսին տեղացող անձրեւները խոտանում են լաւ հունձ: Եղանակը շատ նպաստաւոր է ցանքերին: Երբեք եւս բոլոր արտերը ցանված են: Գիւղերում շատ նեղութիւն են քաշում եղջերաւոր անասունների հիւանդութեան պատճառով: Կան գիւղեր, որոնք զրկվել են իրանց բոլոր անասուններից: Ուստի գրեթե ամբողջովին են: Արդեօք երբ պէտք է հասկանան մեր շինականները կանոնաւոր ախոտներ չինելու անհրաժեշտութիւնը, որտեղ մաքուր օդ եւ բաւականաչափ լոյս լինի: Մեր գիւղերում մարդկանց համար էլ կանոնաւոր բնակարան չը կայ, ուր մնաց անասունների բնակարանը: Նոյն գեղանափոր խորհրդերը, նոյն լոյսից զուրկ գոմերը, նոյն թայ օդաները: Մարդիկ խառն են ապրում առանձնների հետ եւ ինչ կայ դարմանալու, որ հիւանդութիւնը ինչպէս անասունների, նոյնպէս եւ մարդկանց համար, միշտ կայ մեր գիւղերում եւ տանում է անթիւ գոհեր: Շատ է զրկվել մեր շինականների հակառակորդական նիստ ու կացի մասին, բայց ինչ օգուտ:

Բաղադր մէջ առեւտուրը շատ ընկած է: Ընդուն չը կայ, այս է ամենից բերանի խոզը: Գործ չը կայ եւ եղածն էլ անօգուտ է: Երկաթուղին, երեւում է, քաղաքին նշանաւոր օգուտ չը պիտի տայ, եւ դարմանալի չէ: Մեր քաղաքը արդիւնաբերութիւնից զուրկ քաղաք է: Կուրծ գործարաններ, չունի եւ կանոնաւոր վաճառականութիւն: Ամեն ինչ դեռ նահապետական վիճակի մէջ է: Ժամանակ է մտածելու աշխատանքի եւ արհեստների մասին, բայց դժբաղդաբար այստեղ մտածող չը կայ: Դրամատէրները լաւ են համարում անգործ նստել, դրամը չանով տալ, քան թէ բանալ մի որ եւ է գործարան, որ թէ իրանց օգուտ է: Եւ թէ անհամարձեւութեան բնութիւնը, որ օրի վրա խեղճ վիճակի մէջ մնալով, ստիպված է գնալ օտար տեղեր աշխատանք որոնելու: Երեք տարի

միս առաջ շատ խոսում էր քաղաքումս եւ քաղաքային դուռնի նիստերում, այստեղ առեւտրական դպրոց բաց անելու մասին, նման թիֆլիսի առեւտրական դպրոցի ծրագրին: Կեանքը քաղաքին է գիտնալ ինչ հետեւանք ունեցաւ: Յամենայն դէպս այստեղ տղաներ պահել եւ մեծացնել, ուսում տալ սարսափելի նեղութիւն է ամեն մի ծնողի համար, դպրոցներ չը լինելու պատճառով: Այս ամառ, յուլիս ամսին, այստեղ կը լինի ամենամեծ զօրախաղ, որի մէջ պէտք է մասնակցեն թէ տեղիս բոլոր զորքերը եւ թէ թիֆլիսի հեծելազորքը եւ թիգրանոսիները:

Շիրակցի

ՆԱՄԱԿ ԽՐԱՍԿՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 25-ին

Մեր նորածին ժողովրդական թատրոնի մասին մինչեւ այժմ մեր մամուլի մէջ խօսել են զանազան պատահական յանձնարարներ, որոնք տուել են վարկիւրը նկատողութիւններ ներկայացուցիչների մասին եւ ընդհանրապէս այնպիսի անտեղի պահանջներ են արել, որոնք անիրագործելի են եւ նոյն իսկ ծիծաղելի: Յիշում եմ շատերից մի երկու օրինակ: «Լատարադի Աստղագետ» պիւսի ներկայացման մասին հաշիւ տուող այսպիսի կծու լեզու է բանեցրել: Երբեք փոխանակ չը կ'սկսեմ ներկայացում: Եր գերմանական կաթիլ—չանտանք: Այս պահանջի անհեթեթութիւնը տեսնելու համար բաւական է ասել, որ մեր խղճուկ ժողովրդական բեմը ունի միայն երեք պատկեր, որոնցից միայն կարելի է կազմել երկու անհեթեթութիւն, միւր հասարակ, իսկ միւսը ծոխ եւ այս ունեցածներից թատրոնի վարիչները օգտվել են:—Էլ որտեղից գտնեմք պարոնի պահանջած ծոխ պատկերներ... Մի ուրիշ անգամ «Բարեկցութեան» դիմակի տակ պիւսի ներկայացման մասին պ. հաշիւաւորները ասելով չէ համարում ճշմարիտ բառերով նկատել, թէ որոշ բեմերումս չունեն: Եթէ բեմերումս կազմելիս պէտք է աչքի առնել ունենալ ժամանակագրների յոգեբեր:—Այսպէս բարեկցութեամբ կարող ենք ասել, որ գոնէ այս տարի արդէն տրված 19 ներկայացումներից 90/0-ը անցել է շատ արդիւնաւորով, իսկ թէ բեմերումս կազմելիս հարկաւոր է նկատի առնել այն դասակարգը, որի համար տրվում են ներկայացումները, օգտվում ենք առիթից մի փոքրիկ հաշիւ ներկայացնելու հասարակութեան, թէ ինչ է տուել ժողովրդական թատրոնը այս սեզոնին եւ թող դործին նախանձխնդիր մարդիկ տեսնեն արդեօք պիւսիների ընտանիքները նպատակայարմար են եղել, թէ ոչ:

- 1) Համերգ Կարա-Մուրզայի, «Մինի» լող.
- 2) «Փարիզի յրմուղի», Կոմիտե, 4) «Երկրորդ երիտասարդութիւն», Կոմիտե, 4) «Բանդա զօրախ», Կոմիտե, 5) Դոն-Գրիգորի, Կոմիտե, 6) «Բաղդատար Ախպար», Կոմիտե, 7) «Պատաւը հանգիստ է անուշ», 200,000, «Մեանուն կոմիտե», Կոմիտե, 8) «Լարաբաղի Աստղագետ», Կոմիտե, 9) «Ընտանեկան դադուհի», Կոմիտե, 10) «Գաղապար ամիս», Կոմիտե, 11) «Պէպո» Կոմիտե, 12) «Լարաբաղի Աստղագետ», Կոմիտե, 13) «Կարաբաղի պրինց», Կոմիտե, 14) «Մեծագոյն առեւտրականները» Կոմիտե, «Մինի» հարսանիք», Կոմիտե, 15) «Պէպո» Կոմիտե, Կոմիտե, 16) «Ընտանեկան դադուհի», Կոմիտե, 17) «Փառաւոր մօտ», Կոմիտե, Կարա-Մուրզայի եւ «Երկու թուղթ», Կոմիտե, 18) «Բոլոր եւ երգար», Կոմիտե, 19) «Բարեկցութեան» դիմակի տակ, Կոմիտե:

Այս ներկայացումների ընթացքում ստացված են նամակներ ժողովրդի բազմաթիւ ստորագրութեամբ, որոնցով խնդրում են կրկին լինել Երկրորդ երիտասարդութիւնը, ինչպէս ասված է, «Երկու լող լինելու համար» եւ «Լարաբաղի Աստղագետ» իրանց բազմաթիւ ընկերներին էլ տեսնելու հարաւորութիւն տալու համար: Գուցէ հետաքրքրութիւնից զուրկ չի լինի ցոյց տալու համար, թէ որքան ժողովրդը սիրել է այդ ներկայացումները եւ ամենայն սիրով յանձնարում է:—Ասել որ չը նայած տոմսակները միմեանք ծախելու արդիւնքին, 5 եւ 10 կոպեկանոց տոմսակները եղել են ծախող եւ գնողներ մինչեւ մէկ րուրով: Այժմ հետաքրքիր է, թէ, պ. պ. լրատուների կարծիքով, որպիսի բեմերումս մեր ունեցած պիւսիներից ասելի նպատակայարմար է: Բաւական չէ, պարոններ, լրված լինել պատմական ցանկութիւններով եւ սիրով դէպի ժողովրդական թատրոն եւ օլիմպիական բարձրութիւնից պահանջներ անել:—Հարկաւոր են գործի մշակներ եւ լուս գործողներ:

Համերգ, ձեր պահանջների վրա կաւեյանքնեք մի շարք կարիքներ եւ ցանկութիւններ:

- 1) Բաժանմունք Հաւաքարում, 2) Բեմական զգեստներ, դէկորացիաներ եւ իրեր, 3) ժողովրդական թատրոնի յատուկ ընկերություն, 4) յատուկ մասնագործ պիւսիների ընտրելու եւ թարգմանելու համար, 5) մի մասնագործ յատուկ ընկերութեամբ, 6) մշտական փորձված սցենարիստ, 7) մշտական յուլարար, 8) մի կնիստ, փորձերի եւ խորհուրդների համար, եւ այս ամենի վրա աւելացնեք 9) Եւստիուս եւ պարտաճանաչ սեկցիա: Բայց այս բոլորը իրագործելու համար հարկա-

ւոր են ոչ թեր, գործող անձնաւորութիւններ, ուրեմն լաւ կը լինի, եթէ պարոններ հայտնաբերենք գործածեն իրանց գրիչները այն ձեւով, որ աւելացնեն աշխատողների թիւը եւ այս սկսված ամենահամարելի գործը եւ հիմնարկութիւնը հիմնկվայ թոյլ եւ երբեք գրութիւնից կանգնեցնեն հիմնաւոր հողի վրա եւ ապա մեծ մեծ պահանջներ անեն, ապա թէ ոչ այսպիսի անմիջ զարձուածքներով «Թատրոնի» նպատակը եւ նշանակութիւնը հարստահարվում է, զերակատարները խայտառակ էին, կամ զբոլորովին փչացրին դերերը ոչ թէ գործին նպաստում են, այլ ընդհակառակը, հետագանկով այնտեղից անձուէր մշակներին, իրանք են հարստահարում ժողովրդական թատրոնը:

Կ. Շիրինեան

ՆԱՄԱԿ ԽՐԱՍԿՐՈՒԹԵԱՆ

Ախալցխա, ապրիլի 27-ին

Կարգապահ «Մշակ» 83-րորդ համարում Մեքեան քանանայի Բաթումից գրած նամակը, իբր պատասխան եւ հերքում: Նոյն լրագրի 77 եւ 78 համարներում ասված պ. Յ. Մուրա-գեանի «Մուր» թէ լրագրող վերնաշրջով յողաւոր: Ամբողջ օրագի համակրելով պ. Յ. Մուրագեանի արժանաւոր խնդիրն եւ լրովին համակրածիք լինելով նրա հետ երեցփոխական խնդրի մէջ ծրի ունեցած իրաւունքների վերաբերմամբ, ստորագրողներս թոյլ ենք տալիս մեզ ասել, հաստատ փաստերի վրա հիմնված, որ Մեքեան քանանայի ձիւտ չէ խօսում, գրելով լրագրի էջերում, որ երեցփոխական հաշիւների քննութեան արդիւնքի վերաբերմամբ իբր թէ ինքը ոչ ոքի ոչինչ չէ ասել, մինչդեռ, մարտի 18-ին, ս. Փրիկի եկեղեցում իր խօսած քարոզի մէջ բացարձակ կերպով յայտնեց, թէ եկեղեցին դրամական կորուստ չէ ունեցել, ոչ հազարներով, ոչ հարիւրներով, թէ եղածները չնչին բաներ են, որոնց վերաբերելով ասելի հոգեւոր իշխանութեան, քան իրան երեցփոխին, որին ամեն կերպ աշխատում էր արդար զուր բերել, ուստի կորուստ էր բոլորիս մոռնալ ամեն բան եւ նրա գաղափարներ թողնել երկրի գաղափարին: Սրա հետ միաժամանակ մեր համակրութիւնը եւ խորին շնորհակալութիւնն ենք յայտնում պ. Յ. Յ.—ին, որ, ախալցխայի չը լինելով հանդերձ, իր արդարացի եւ համարձակ տողերով արժանաւոր տուեց մեր իրաւունքների պաշտպանութեան:

155 ստորագրութիւն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

1898 թւի մարտի 26-ին կայացած Բարձրագոյն հրամանի հիման վրա, Կովկասեան ուսումնարանական չըմանի պ. հոգաբարձուի կարգադրութեամբ, Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների ղեկավար Գրոզով Կովկասեան ուսումնարանական իշխանութեան վարչութեան իրաւասութեան ենթակից Թիֆլիս քաղաքի Նորաշենի ս. Աստուածածնի եկեղեցու բազում գանձից երկարի քարաշէն տունը, որպէս հայ-լուսաւորչական եկեղեցական դպրոցին պատկանող շինութիւն, Թիֆլիսի նահանգական դատարանը, ապրիլի 16-ին քննելով վրաստանի եւ Իմէրէթի հայ-լուսաւորչական կոնսիստորիայի պահանջը, որով նա իր սեփականութիւնն է համարում վերոյիշեալ շինութիւնը, հետեւեալ վճիռ կայացրեց, որ յայտարարվեց ապրիլի 30-ին, 1) Նորաշենի ս. Աստուածածնի եկեղեցին սեփականատէր ճանաչել, յանձնի հայոց կոնսիստորիայի, վերոյիշեալ եկեղեցու բազում գանձից քարէ երկարի տան, եւ առնել ուսումնարանական իշխանութեանից այդ տունը ու յանձնել հայոց կոնսիստորիային եւ 2) 600 րուբլի դատարանի եւ գործ վարելու ծախսի առնել ժողովրդական լուսաւորչական միջնորդութիւնից, յանձնել Կովկասի հոգաբարձուի Կովկասեան ուսումնարանական չըմանի շահերը դատարանում պաշտպանում էր չըմանի լրագրող, Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ Պրեկոպիկով, որը ապացուցանում էր, թէ այդ տունը պատկանելիս է եղել նախկին հայոց եկեղեցական դպրոցին, պատճառաբանելով իր պահանջը, ի միջի այլոց, նրանով, թէ դպրոցն առաջ շինութեան եւ միջոցների ներկայումս գոյութիւն ունենալ չէ կարող: Հայոց կոնսիստորիայի շահերը պաշտպանում էր երդուեալ հաւատարմատար Սօկրատ Մէլիք-Աղաւանդ:

Կիրակի, ապրիլի 29-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի փոխադարձ ազատագրութեան ընկերութեան ընդհանուր ժողովը, որը քննեց եւ վաւերացրեց անցեալ տարվայ հաշիւը, հաստատեց առաջիկայ տարվայ նախահաշիւը եւ ընտրեց պաշտօնավարներ: Վարչութեան անդամները իշխան ի. Բեհրութեան, իսկ կանգիդատն՝ Ն. Գրիգորեան: Վերահսկող կոմիտէի անդամներ ընտրվեցին Ն. Օստրոգորսկի եւ Յ.

Մէլիք-Աղաւանդ, կանգիդատ Յ. Ալիխանեան, վերաստուգող յանձնագրովի անդամներ՝ Մ. Դոլուխանեան եւ Գ. Թամաշեան: Բացի այդ, փոխադարձ ազատագրական ընկերութեան ընդհանուր ժողովը որոշեց խնդրամատոյց լինել փոփոխելու կանոնադրութեան մի քանի կէտերը: Փոփոխութիւնները ձեւակերպելու նպատակով ընտրվեց մի յանձնագրով, որ պէտք է ներկայացնէ իր զեկուցումը հետեւեալ հերթական ժողովի ըննութեան եւ հաստատութեան:

Մեզ հաղորդում են. «Ապրիլի 29-ին, Աւստիան ժողովրդական թատրոնում, սիրողները, մասնակցութեամբ դերասանների տիկ. Զարէի եւ դերասաններ—պ. պ. Պարոն-Սարգսեանի եւ Ամօի ներկայացրին Օստրոֆուլու «Արդիւնաւոր պաշտօն» կոմէդիան: Ձր նայելով, որ այդ օրը անձրեւային էր, այս անգամ էլ թատրոնը լրեւն էր սովորական այցելուներով: Պիւսի պատասխանատու դերը կատարում էր պ. Սիւսեան, որ սկզբում բաւարար էր. տիկ. Զարէի եւ պ. Ամօ շատ լաւ էին, լաւ էին մասնաւոր օր. Վարսեղիկ—(Պոլինայի) եւ օր. ՆՆ—(Իւլիսայի) դերերում: Ինչպէս զրված էր աֆիշներում, սովորականից մի ժամ վաղ պէտք է սկսէին խաղը, այսինքն առաւօտեան ժամը 10-ին, բայց ներկայացումը սկսվեց միայն 11½ ժամին: Եւ այցելուները դրսում, անձրեւի տակ թրջվելով, անհամբեր սպասում էին դան բացման:

Բարձրագոյն դպրոցների պրոֆէսորները, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրողները, կազմակերպում են մի շարք խորհրդակցութեանները դպրոցական դաստիարակութեան մասին: Այդ խորհրդակցութեանների եզրակացութիւնները կը ներկայացվեն ժողովրդական լուսաւորչական միջնորդին:

Նոյն լրագրի ներքին տեսլով, զատկական տոներ ժամանակ անկարգութիւններ են տեղի ունեցել Տաղանթի, Կիլիսի, եւ Աստրախան քաղաքներում: Տաղանթում Զատիկի երրորդ օրը հարբած ամբողջ մի մեծ կոիւ սկսեց գերեզմանատանը եւ այն հրապարակում, որ գտնվում է պօստ-հետադրական դատանիակի հանդէպ: Կուր ժամանակ վերջ տուցաւ մի օստիկանական զինուոր Կիլիսիում անկարգութեանները կատարվեցին Նոր շուկայում, որտեղ ապրում են հրեաներ: Այնտեղ վիրաւորված է պրիստաւի մի օգնական:

Լրագրի ներքին հաղորդում են, թէ մտադրութիւն կայ սահմանելու որոշ աստիճաններ մասնակի օրգաններին կառավարութեան կողմից արվող նախագրութեանների վերաբերմամբ: Առաջին նախագրութեանը պէտք է գործութիւն ունենայ միայն մի տարվայ ընթացքում:

Կառավարիչ սենատի քաղաքացիական վրձաբեկ ղեկավարածնոր բազմաթիւ, թէ օրինականացրած ապօրինի զուակներին տալով օրինաւոր զուակներին բոլոր իրաւունքները, զրանով օրէնքը այդ զուակներին դարձնում է երկու ծնողների ընտանիքների անհրաժեշտ, որոնք իրաւունք ունեն ժողովրդի եւ կողմնակի գծերից նրանց հասանելի ժողովրդականները: Այս որոշումը չորհիւ, օրէնքը տալիս է օրինականացրած զուակներին իրաւունք եւ այնպիսի ժողովրդականների իրաւունքը, այն ժամանակ օրինականացրած զուակները իրաւունք ունեն պահանջելու, որ հետագայ ազգականները վերադարձնեն ստացած ժողովրդականները:

«Новое Обозрение» լրագրի հաղորդում է, թէ Բագուի երրորդ գիմնազիայի գրեկատոր միջնորդութիւն է յարուցել թուրքական ստանալու համար հիմնելու Բագուում, իբրեւ առաջին փորձ, ընդհանուր կրթական երեկոցեան կուրսեր, իր ղեկավարութեամբ եւ իր անձնակազմով պատասխանատու թեմայի Կուրսերում ենթադրվում է աւանդել հետեւեալ առարկաները՝ աստուածաբանութիւն, մաթեմատիկա, բնական գիտութիւններ, գործնական բժշկութիւն, հասարակական եւ հումանիտարական գիտութիւններ, հայտնաբերութիւն, գործնական մեքենայագիտութիւն, ֆրանսերէն, գերմաներէն եւ տեղական լեզուներ:

Երեւանի մեզ գրում են. «Անձրեւային

օրերը շարունակվում են մեղմանում անընդհատ: Անձրեւների հետ տեղ-տեղ գալիս է կարկուտ, բայց չօշակիլի փնտներ դեռ եւս տեղի չեն ունեցել:

ԱՅՈՒՄԱՆԱԿԻՑ մեզ գրում են. «Դէպի Ա- խալիսա տանող խնամուկ վրա մի արագօվայցի ֆուրգոնչիկ են գտել իր ֆուրգոնի ձիերի տակ ընկած, մեռած: Լծած ձիերը կանգնած են ե- ղի, իսկ դժբաղդ արագօվայցու դիակը՝ նրանց լուրջ մէջ: Գլխի վրա հարուստների հեռքեր են եղել. ինչպէս երեւում է, ձի է աքացի ունեւոր:

ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Այլմ- րանցում նորից աղմուկ եւ անհամութիւններ են շարունակվում: Հարցը Մ. Բերբերեանին նորից անգամ ընդունելու մասին էր: 41 ան- դամներ թղթով խնդրում էին, որ նորից ըն- դունեն ա. Բերբերեանին: Ինքը՝ ա. Բերբերեան, մի նամակ էր ուղարկել միջնորդութեամբ ա. Գ. Չուբարեանին: Ժողովականները, աւելի ճիշդ է ասել ա. Գ. աւագները, չէ համաձայնվե- ցին կարգաւ այդ նամակը, Աստուած գիտէ ինչու: Արդեօք վախենում էին նամակի բո- վանդակութիւնից կամ մի ուրիշ պատճառ կար, անգամները բան չիմացան: Խայտառակութիւնը աւելի մեծ եղաւ, երբ փոխադարձ վարկի ըն- կանքի մասին նախապէս՝ ա. Գ. Սպիթեմեան, մօտենալով սեղանին, սկսեց ձեռքերով խփել սեղանին եւ գոռաց «МАЛЫШКА!» Այդ նոր խայտառակութեան մասին իսկոյն արձանա- գրութիւն կազմվեց:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Հաստատ աղ- բիւրից լուծ ենք, որ մեր տաղանդաւոր դե- բասանուհի տիկ. Սիրանոյշը վերջապէս հա- մաձայնվել է այս ամառ գալ Շուշի հայոց նե- րկայուցումներին մասնակցելու: Յարգելի տիկ- նոջ երեւալը մեզ մօտ անկախած մեծ ուրա- խութիւն եւ հետաքրքրութիւն կը պատճառէ:

ԳՐՈՐԻՑ մեզ գրում են. «Վերախի, ամսիս 15-ին, ա. Ստեփանոս քարայն եկեղեցու ծխա- կանները հրաւիրված էին եկեղեցի նոր երէց- փոխ ընտրելու, որովհետեւ հին երէցփոխ ա. Տատեանի ժամանակը լրացել է: Գործախա- րար, այս անգամն էլ ընտրութիւնը չը կայա- ցաւ, ինչպէս եւ առաջին անգամ, որովհետեւ 250 տուն ծխականներից ներկայ էին միայն 27 մարդ: Գործակալը յայտնեց, որ երբորդ անգամ պէտք է հրաւիրել ծխականներին եւ մի եւ նոյն ժամանակ առաջարկեց ներկայ ե- ղողներին չը հետանալ եկեղեցուց եւ լսել 1900 թիւ եւ եւ մուտքի հաշիւները, որ երէցփոխ ա. Տատեանի ներկայացրեց շատ բարեխղճաբար, այնպէս որ բոլոր հանդիսականները շնորհա- կալութեամբ հեռացան եկեղեցուց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Կ. Պօլսից գրում են «Temps» լրագրին, թէ իրերի գրութիւնը Ինկնոսում շատ աւելի լուրջ է, քան կարծում են: Բանն այն է, որ Ինկնոսի ապստամբները ձգտում են խել տալով ծխա- կաններին մանկեղանակների հոգեւոր գլուխ կոչ- վելու: Իրաւունքը, տալ այդ իրաւունքը մար- զաբէի սերունդներին եւ վերականգնել արաբա- կան թագաւորութիւնը: Այս նպատակով Համիդ- էդդին, Մահմէդի յետնորդներից մէկը, ժողովեց իր շուրջը բազմաթիւ համակրողներ, յարձակ- վեց թիւրքերի վրա, ջարդեց նրանց եւ առաւ հաստատ բերդը, որտեղ կառուցեց բոլոր բերդա- պահներին: Դրանից յետոյ նա իրան հուշակեց խալիֆ: «Այս արաբական ագիտացիան, — գրում է «Temps» լրագրի թղթակիցը, — մի այնպիսի մասնաւոր երեւոյթ է, որ կարելի լինի ձնել շատ ավելի կազմակերպած արշաւանքով: Ագիտա- ցիան, ընդհակառակը, խոր արմատներ է գցել եւ նա ամեն կերպ աջակցութիւն է գտնում մի գաղափարի մեծանշան ընկերութեան կողմից, որի գլխաւոր վարչութիւնը գտնվում Կայի- րէում, իսկ բաժանմունքները — Դամասկոսում եւ Մեկկայում: Վերջին ուխտագնացութեան ժամանակ դէպի Մեկկա՝ այդ ընկերութիւնը ուղարկեց այնտեղ մի ստորա խումբ իր ան- զաններից, որոնք պատկանում էին արաբական ամենայայնիւ ընտանիքներին, ագիտացիա անելու ուխտագնացների մէջ:

— «Information» լրագրի ստացած տեղեկու- թիւնները կազմակերպած արշաւանքով: Ագիտա- ցիան Սերբիայում չէ փոխել դեռ եւս եւ ոչ մի բան: Մինչեւ անգամ գրաքննութեան վե- նարկին միջնորդ-նախագահ Նուրաբ փաշայի որդին, Պօղոս փաշան, որ աւարտել է Պարիզի պոլիտեխնիկական դպրոցը: — Նոյն լրագրի ասելով. Ալեքսանդրիայի յունաւորականների պատրիարք Յօսիկ չուտով ճանապարհ կրնին Հաբէշտան եւ, ներկայա-

նակառի առնել ամենախիստ գրաքննութեան պահանջները: Ընդհանրութեան կարծիքով, դրութիւնը ամենեւին չէ բարեփոխ: Սենատի սահմանում ամբողջ երկրի մէջ դժգոհութիւն առաջ բերեց. դա արդէն երեւում է այն հան- դամանքից, որ, չը նայելով ոստիկանութեան կողմից ձեռնարկված բոլոր միջոցներին, ոչ մի համայնք չը յայտնեց իր շնորհակալութիւնը թագաւորին նոր սահմանադրութիւն շնորհելու համար: Շնորհակալութեան արտայայտութիւն- ներ ստացված են միայն մի քանի ընկերու- թիւններից: 1894 թիւին, երբ փոխվեց 1888-ի սահմանադրութիւնը, ոստիկանութեանը աջող- վեց ստիպել ժողովրդին դէթ արաքուստ յայտնելու իր ուրախութիւնը. իսկ այժմ ամեն ինչ լուծ է եւ ոչ մի տեղ չէ երեւում ուրա- խութեան մի նշույլ անգամ, այն ինչ երկրի մէջ մտնելով եւ նոր սահմանադրութիւն, որ պէտք է փոփոխութեան ենթարկէ բոլոր նախկին կարգերը:

— Իզուր Եւրօպայում կարծում են, — ասում է արտասահմանային թիւրք լրագրից մե- կը, — թէ Արգիւ-Համիդի կառավարութիւնը չէ կարողանում փող ճարել իր պարտքերը վճա- րելու համար, առանձնապէս այն չնչին պարտ- քը, որ մնում է դեռ եւս չը վճարված ռու- թիքական պատերազմական տուգանքից: Շատ անգամ ռուսաց դեսպանը դիմել է Բ. Դրանը այդ մասին, բայց ամեն անգամ Բ. Դրանը միակ պատասխանն էղել է այն, թէ Թիւրքիայի պե- տական գանձարանը դատարի է: Մինչդեռ այդ պատասխաններից ամենիցս յետոյ հա- ռիր հազարաւոր իրանիներ են վճարվել զանա- զան գործարանների եւ նաւարանների վար- չութիւններին նոր թիւղանութիւնի եւ նաւերի համար, չինվել են զօրանոցներ եւ բերդեր, կազմակերպվել են նոր զորապահներ, ուղարկ- վել են արտակարգ դեսպանութիւններ, վառու- վել են ահագին գուժարներ պալատների նո- րոգութեան եւ թագաւորի անձնական ընդունե- լութեան համար: Իր բոլոր կապիւրդներին բա- ւարարութիւն տալու համար թիւրքական կա- ռավարութիւնը փող գտնում է, բայց պարտ- քերը վճարելու ժամանակ նրա գանձարանը դատարի է... Այս տեսակ հասկանալի են երե- լոյթները եւսկայանների համար բոլորովին պարզ չեն, իսկ մեզ, թիւրքերիս, նրանք շատ լաւ հասկանալի են: Դարերի ընթացքում սո- վորած լինելով ապրելու կողոպուտներով եւ կաշառակերութեամբ, կառավարող անձինք թիւրքիայում բոլորովին կորցրել են պարտքեր վճարելու անհրաժեշտութեան գիտակցութիւնը, եթէ միայն չը կա ստիպումը: Այս պատճա- րով, օրինակ, Կ. Պօլսում սովորական երեւոյթ է, որ բարձր չըլանի անձինք, որոնք միջին- ների կարողութիւն ունեն, հրաժարվում են վճարելու իրանց պարտքը ոսկեղէն եւ արծա- թեղէն ծախող վաճառականներին, լուսանկար- ներին, դերձակներին, կոշակարներին եւ այլն... Ամենքին յայտնի է այն փաստը, որ երկար ժամանակ Իլդիզ-Կիսիկի շինութեան վրա աշ- խատող հայ, թիւրք եւ քրդեր բազմաթիւ բանտները, որոնց թիւրք համուսնու էր մի քա- նի հազարի, չը ստացան ոչ մի կօպէկ, բայց այն կիրակիից, որ օրական տրվում էր նրանց՝ նրանց ծանր աշխատանքների ժամանակ թիւր- քական կառավարութեան այս կողոպուտի ընա- ւորութիւնը երեւան է գալիս ամեն անգամ, երբ խօսք է լինում պարտքի վճարման մա- սին:

— Ֆրանսիական լրագրիներում տպված է այն նամակը, որ «Օմանեան կենտրոնական ազատամարտ կոմիտե» նորիս ուղարկել է «Մարդու եւ քաղաքացու իրաւունքների պաշտպանութեան դաշնակցութեանը»: Այդ նամակով կոմիտեի խնդրում է այդ դաշնակ- ցութեանը միջամտել, որպէս զի բռնական քննութիւն նշանակվի գահալիցի արված եւ Չիքապոսի պալատում մի ամբողջ քաղաքի դար բանտարկված Մուրադ V-ի վրա, որին պահում են այնտեղ իբր հոգեկան հիւանդի կօմիտեի պնդում է, որ ապօրինութիւն է անարդարութիւն է այդ պատճառով կամ այդ պատճառով բանտարկված պահել սուլթան Համիդի եղբորը, գահընկէց սուլթան Մու- րադ հինգերորդին: Կօմիտեի նկատում է, որ եթէ Մուրադ V իսկապէս հիւանդ է, պէտք է նրան բժշկել գիտութեան ցոյց տուած միջոցներով, իսկ եթէ առողջ է, պէտք է ազա- տութիւն տալ նրան:

— Եւրօպական լրագրիները վերապահում են հաղորդում են, թէ Վիլհելմ կայսրը, երբ մա- յիսի 10-ին Ստրասբուրգ գնալ, կը վերացնէ զիկատաւորան Էլզաս-Լօթարինգիայում:

— Նիւ-Եօրկից «Times» լրագրին հեռագրում են, որ Պէկինից ստացված տեղեկութիւնների համաձայն, Լի-Պոնց-Չանգ ասել է, թէ սովը տարածվել է Շանսիի ամբողջ նահանգում, ուր սովահանների թիւը հասնում է 11 միլիոնի, եւ որ անհրաժեշտ է անմիջական օգնութիւն:

— «Al Mistr» լրագիրը հաղորդում է, թէ եգիպտական միսիստների խորհուրդը հաւա- նութիւն տուեց այն էլեքտրական երկաթու- ղային գծի շինութեանը, որ պէտք է անցնի Սուէզի ջրանցքի ձախ ափով: Երկաթուղու շինութեան նախագիծը կազմել է եգիպտական նախկին միսիստ-նախագահ Նուրաբ փաշայի որդին, Պօղոս փաշան, որ աւարտել է Պարիզի պոլիտեխնիկական դպրոցը:

— Նոյն լրագրի ասելով. Ալեքսանդրիայի յունաւորականների պատրիարք Յօսիկ չուտով ճանապարհ կրնին Հաբէշտան եւ, ներկայա-

նակով Նեզուսին, թոյլտուութիւն կը խնդրէ ճանապարհորդելու ամբողջ Եթովպիայում: Իր ճանապարհորդութիւնների ժամանակ պատ- րիարք Յօսիկ կը ձեռնարկէ մի քանի քահա- նաներ յունաւորականների ծխակառարու- թեամբ:

— Սուլթանի ֆիրմանով գաղթականական մասնաժողովի նախագահ Բիզա փաշային հրա- մարված է ամեն ջանք գործ դնել յարմարու- թիւններ տալու եւ Փօքը-Ասիական նահանգ- ներում բնակեցնելու այն մահմեդականներին, որոնք գաղթում են Թիւրքիա կովկասից, Կիւ- միկ, Բուսիսիայից Բուսիսիայից եւ Բոսնիայից ու Հէրցեգովինայից: Մի այլ ֆիրմանով, տուած Հաջի-Բէմիդ, Մուստաֆա եւ Սէլիմ փաշանե- րին, հրամարվում է նրանց ստանալ պետական գանձարանից 20,000 լիւրա եւ, ուղեւորվելով Անգորայի նահանգը, հսկել այնտեղ մի քանի հազար կովկասցիների տեղաւորման վրա ու բաժանել դրամական օժանդակութիւններ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՐՈՐԻՍԱՎՈՐՈՒՄԻՆԵՐ

28 ապրիլի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Բարձրագոյն հրաման ֆի- նանսների մինիստրին: Վիսնանսների մասնաժո- ղովում քննված ձեռ առաջարկութեան համա- ձայն, օգտակար համարելով փոխառութիւն կատարել պետական գանձարանին վերադարձ- նելու համար այն գումարները, որոնք 1900 թիւին փոխ են տրված երկաթուղիական ընկե- րութիւններին, եւ նոյնպէս այս տարվայ ըն- թացքում նոյնպիսի փոխառութիւններ անե- լու համար, հրամարվում ենք ձեռ բաց թողնել 40% փոխառութիւն չորս հարիւր քսան եւ չորս միլիոն ֆրանկ (հարիւր յիսուն ինն մի- լիոն ռուբլի) սկզբնական գումարի, հետեւեալ հիմքերով: 1) Այս փոխառութիւնը մտցըն- վում է պետական պարտքերի գիրքը «Ռուսա- կան 40% փոխառութեան ընդունում» անունով: 2) Այս փոխառութիւնը բաժանվում է 53 սերիայի, իւրաքանչիւրը 8 միլիոն ֆրանկի (3 մի- լիոն ռուբլի): 3) Այս փոխառութեան օրիգա- ցիաները տրվում են անուանական եւ անա- նուն, 500, 2,500 եւ 12,500 ֆրանկ արժողու- թեամբ, հաշվելով իւրաքանչիւր 500 ֆրանկը հաւասար 187 ռուբլի 50 կօպէկ, 404 գերմա- նական կայսերական մարկի, 19 ֆունտ ստե- րլինգի 15 չիլինգի վեց պէնսի, 239 հօլլանդական գուլդենի եւ 96,25 ոսկէ դոլլարի:

ԼՈՒՐՈՒ: «Times» լրագրին հեռագրում են Պիւսսարբիլէից, որ 1500 զինուորած ռօթ- ներ Բուլֆօլդով մօտ անձնատուր եղան կամ զերի առնվեցին: Պետերսբուրգ խվեց ռօթնե- րից որպէս գործողութեան յնակէտ: Թղթա- կիցը շատ գովում է զրահապատ գնացքները, որպէս անգնահատելի միջոցներ պարտիզան պատերազմում: «Daily Mail»-ին Կօբէլից հաղոր- դում են, որ կօբէլական կառավարութիւնը հրաժարվում է հաստատել ֆրանսիական փո- խառութիւնը եւ պայմանագիրը Սուլթ-Վիտա երկաթուղին շինելու մասին: Սուլթերի վերա- դարձաւ Լօնդոն:

ԲԱՐՑԵԼՈՆԱ: Կարգը վերականգնված է:

Զօրքերը զօրանցները վերադարձան: Պէկին: Պահանջների ընդհանուր գումարը, 450 միլիոն տաէլ, հաղորդվեց այսօր չինացի- ներին: Չինացի պաշտօնականները մեծամասնու- թիւնը այնպիսի փոխառութեան կողմնակից է, որ երաշխաւորված կը լինի պետութիւններից, հանգցնելով պարտքը 50 տարվայ ընթացքում: Ուրիշները կարծում են, որ կարելի է առանց փոխառութեան էլ վճարել ամբողջ գումարը: Ինչ տարվայ ընթացքում: Պալատը խորհում է, թէ ինչպէս պէտք է իւրաքանչիւր տարի 20 միլիոն աւելի հաւաքել տարեկան: Չինական լրագրիներին մի եւ նոյն ժամանակ հրամանա- գրված է պնդել պահանջները պակասեցնելու վրա: Վարձատրութիւնը հաշւած է պատերազ- մական ծախսերը ծածկելու համար: Դիւնչեւ յունիսի վերջը: Դեպքանների ժողովում 4500- ված է բացատրել չինացիներին, որ պահանջ- ների գումարը իսկապէս արված ծախսերից ա- ւելի է:

ՎԱԼԿ: Բողոքական քարոզիչներ Պիւսի եւ Վիլհէ գաղապարոված են պաշտօնաւորակ լինելու, ուղղափառների վրա օրինակատարու- թիւն անելու համար:

ԳՐՈՐԻՍ: Բիւսսար այրվում է:

29 ապրիլի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ֆինանսների մինիստրին արված Բարձրագոյն անուանական հրամանի մնացեալ կէտերը հետեւեալներն են. 4) Այն կանոնները, որոնք վերաբերվում են անուա- նական օրիգացիաներին, նրանց ձեռք ձեռք

անցնելու եւ անուանականները անանուն եւ ընդհակառակը դարձնելուն, հաստատվում են ձեռ ձեռ 5) Օրիգացիաների տարեկան եկամուտի քանակութիւնը որոշվում է տարին 40%, որ վճարվում է եռամսեակներով: Եռամս- ների հաշիւը սկսվում է 1901 թիւի մայիսի 19-ից (յունիսի 1-ից): 6) Մինչեւ 1916 թիւ յունիսի 1-ը (14-ը) չի սկսվի այս փոխառու- թեան ոչ յետ գնումը, ոչ չի վաճառվում, իսկ այդ ժամանակից սկսած, բաց թողնված օրիգացիա- ները կարող են ամեն րօպէ չիջուցվել սկզբնական գնով լիովին կամ տիրաժով, ամբողջ սերիանե- րով, այն պայմանով, որ երկու դէպքում էլ օրիգացիաների յետ գնման մասին յայտարարվի ոչ պակաս քան երեք ամիս առաջ մինչեւ այն կարծիքների պայմանագրով, որոնց հետ միաժամանակ պէտք է վճարվի յետ գնվող սերիաների դրամագումար: 7) Այս փոխառու- թեան օրիգացիաների կտրոնները պահա- նում են իրանց վճարողական ուժը նրանց վը- ճարման պայմանագրերի սկզբնաւորութիւնից տասը տարվայ ընթացքում, իսկ օրիգացիա- ները՝ 30 տարվայ ընթացքում, սկսած նրանց դէմ դրամագումար վճարելու համար նշանակ- ված պայմանագրերից: 8) Փոխառութեան տոկոսների եւ չիջուցման ենթարկվելիք օր- իգացիաների դրամագումար վճարումը կատար- վում է—Պետերսբուրգում՝ ռուբլիներով, պետա- կան բանկից, Պարիզում—ֆրանկներով, Բեռ- լինում՝ կայսերական պետական մարկերով, Լօնդոնում—ֆունտ ստերլինգներով, Ամստեր- դամում՝ հօլլանդական գուլդեններով եւ Նիւ- Եօրկում ոսկէ դոլլարներով, այն տեղերում, որ դուք կը նշանակէք այդ բանի համար: 9) Այս փոխառութեան օրիգացիաները ընդմիշտ ա- զատվում են բոլոր ռուսական հարկերից: 10) Այս փոխառութեան օրիգացիաները գետեղվում են ձեռ կողմից այդ բանի համար ընտրված կրեդի- տային հիմնարկութիւնների եւ բանկային տնիքի միջոցով: 11) Այժմ բաց թողնվում «Ռուսական 40%» հաստատուն ընդունվեց պատկանող իրաւունք- ները եւ արտօնութիւնները, իբր արգելի դրա- ւականներ եւ ակցիյային վճարումների պաշ- արկութիւն ընդունվելու վերաբերմամբ, որոնե- լու էք դուք այս փոխառութիւնը բաց թող- նելու ժամանակ: Այս փոխառութեան հաշիւ- ները փակելուց յետոյ մնացած արդիւնքը գործ- դնել հատուցանելու համար պետական գան- ձարանին այն գումարները, որոնք 1900 թիւին ծախված են երկաթուղիական ընկերութիւն- ներին փոխառութիւններ անելու համար եւ նոյնպէս որպէս զի այդ տեսակ փոխառու- թիւններ անվեն 1901 թիւին:

Բարձրագոյն զօրահանգէս տեղի կունենայ մայիսի 1-ին, Մարսան դաշտում:

Գինեւալ-էլյանանտ Վօլիօվի հեռագիրը Պօրտ-Արտուրից ապրիլի 24-ից, «Մարտի 15-ից մինչեւ ապրիլի 15-ը գինեւալ-էլյանանտ Յէր- պիցիլու եւ գնդապետ Դրեմազովի զօրաբաժին- ներում վիրաւորված են՝ 1-ին բարձր-ուղի- նեան կազակներին գնդի փոխ-եսաուլ Լէպեօլին, 15-դ արեւելեան-սերիբեան Բացանաձիգ գնդի շտաբ-կապիտան Շմիդտ եւ պօրուչիկ Դիւր եւ պօրտ-արտուրեան բերդապահ գնդի կապիտան Օրնիսիկ: զրանցից փոխ-եսաուլ Լէպեօլին մե- ռաւ վերքերից: Թեթեւ վիրաւորված են՝ փոխ- գնդապետ Գորեպիլիչ եւ պօրպօրուչիկ Չէն- ցէվ: Չինուրները սպանված են 16 եւ վիրա- ւորված են 37 հոգի:

ԿԱԶԱ: Աշտանացանի գոհացուցիչ դրու- թիւնը, շնորհիւ չոր եւ սառը եղանակի, սկսեց դէպի վառը փոխվել: Անձուր կանգ է առնում. տեղ-տեղ գեղանկութիւն է երեւում:

ԼՈՒՐՈՒ: Կիւսնէր հեռագրում է Պէտո- րիայից. «Ապրիլի 24-ից զանազան զօրախն- ներ սպանեցին 28 ռօթներին, վիրաւորեցին վեցին, գերի առան 130-ի. անձնատուր եղան 183 հոգի: Ապրիլացիներին ձեռքը աւար է ըն- կել շատ աղքատները, 230 ապրիլ, 1,500 ձիեր եւ շատ ուսուսող պաշարներ:

Կ. ՊՈԼԻՍ: Բ. Դուրը շարունակում է մեղադ- րել մաքսանկալութեան մէջ եւ պահանջում է փակել պատասխանները: Դեպքանները հրա- ժարվում են ընդունել յայտադրել: Ֆրանսիա- կան «Կօնգո» չղեկնաւոր հրաժարվեց ընդունել Սերիա ուղարկող թիւրքական պօստային ապ- րանքաժառանգ: Ֆրանսիական դեսպանը հրա- մանադրեց ֆրանսիական երկու պահակաւա- րին պատրաստ լինել յամենայն դէպս: Բա- ւարացում ժանտախտով հիւանդանալու կրեք նոր դէպքեր եղան:

30 ապրիլի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ապրիլի 29-ին, Թագաւոր Կայսրի Օտտօ քաղաքում փրկվելու տառա- մական եւ Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրո-

Типографія Грузинск. Т—ва. Большая-Ванская ул., № 27